ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3635-Ա « 24 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի Հ.231-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով «Նազարյան Քուլինգ Սիսթեմս» ՍՊԸ-ի 12.06.2026թ. հ.Դ-61025-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 15-ի «Երևան, Ավան, Մարշալ Բաբաջանյան փողոց հ.54 հասցեում սեփականության իրավունքով «Նազարյան Քուլինգ Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող և Մարշալ Բաբաջանյան փողոց հ.54/2 հասցեում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.231-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, 1-ին և 7-րդ կետերում՝ ««Նազարյան Քուլինգ Սիստեմս»» բառերը փոխարինել ««Նազարյան Քուլինգ Սիսթեմս»» բառերով.

2) Որոշման 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի բյուջեի հ.900015211262 և գանձապետական հ.900015211254 հաշիվներին 12.06.2026թ. մուտքագրված համապատասխանաբար՝ 18045723 (տասնութ միլիոն քառասունհինգ հազար յոթ հարյուր քսաներեք) դրամ և 4782321 (չորս միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր քսանմեկ) դրամ գումարները վճարված լինելու հանգամանքը, 30-օրյա ժամկետում «Նազարյան Քուլինգ Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել կառույցի և դրա համար առանձնացված հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ